

№84 ՀՐԱՑԱՐԱԿԱՆԹԻՆ ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶԻ №84

ՐԱԴԱՄԷՍ



ԻՄ ՏՕՆԱԾԱՌԸ

(Զարանգի Արմուշիկի արկածներից)

891. 995

Ր-13

30 MAY 2011

891.99 5.
P-13 wr

№84 ՀՐԱՏԱՐԱՌԻԹԻԻՆ ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ №84

Բ Ա Դ Ա Մ Է Ս

ԻՄ ՏՕՆԱԾԱՌԸ

(Չարաճճի Արմուշիկի արկածներից)

1415
38



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագածիկ «Էսպերանս» Երկրաւերկնակայա № 17:
1911 թ.



ՅԱՌԱՋԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Իբրև Վերամիտեան փողոցով անցնելիս աչքիս ընկա Քաղաքային Լոմբարդի պատից կայցրած հետեւեալ աղղարարութիւնը՝


«Կտրի մեքենաների գրտականով փոխառութիւնը դադարեցրած է մինչեւ նոր տնօրէնութիւն»:

Արդեօք Քաղաքային Լոմբարդը անսահման թւով կարի մեքենայ գրաւ վերցրած լինելու պատճառով էր այս կարգադրութիւնն արել, թէ ուրիշ շարժառիթներից դրդւած, ես չըստուգեցի: Սակայն կամենում էի այդ աղղարարութեան վրայ կայցնել հետեւեալը՝

Քաղաքային Լոմբարդը ընդ միշտ դադարել է կարի մեքենաներ գրաւ վերցնելու: Այդ փոխառութիւնն այժմ կարելի է անել ժրաջան ՄԵՂՆԻ փեթականոցում, Գանովակայա փողոց տ. № 7, ըսց է ամբողջ օրը:

Իսկ ՄԵՂՆԻ աշխատանքի տան ղեկավարներին էլ խնդրել, որ ով իր կարի մեքենան կամենայ գրաւ դնել, նրան գործ տան կատարելու և հաշիւն ու արտադրած առարկան ուղարկեն Քաղաքային մշտական վաճառանոցին:

ԲՄՄԱԴԵՍ



ԻՄ ՏՕՆԱԾԱՌԸ



Պեկտեմբերի 24-ն էր, մի բուք-բորան օր: Երկինքը պարզ էր, բայց Ղազբէկից փչող ուժգին քամին սրբթարթացնում էր ու խսկոյն հարբուխ գցում նրանց, ով բարակ էր հագնւած: Կրկնակօշիկներս մաշւած էին, չէի հագնւում: Պայլտօս ու գլխարկս էլ էին բարակ: Ես էլ էի հարբուխ ընկել:

Երկու ամսւայ ոռճիկս չէի ստացել, պահել էի, որ միանգամից ստանամ և նոր-ճարուն՝ նոր պայլտօ, հաստ գլխարկ, կրկնակօշիկ առնեմ և մի քանի մանէթի էլ դէս ու դէն, տուն ուղարկեմ: Ասենք տանը դրա ումիդին չէին, բայց ինչ էլ լինէր, ազիզ օրեր էին, դատարկ նամակը ինչի՞ նման է:

Ճշմարիտ է մեծ ոմն չէի, ամսական 17 մանէթ էի ստանում, բայց պաշտօնս պատւաբեր էր: Խմբագրատան ցրւիչ էի, ես էլ իմ տեղն ունէի, մանաւանդ պօստում: Այնտեղ մենք կարծէք առանձին արտօնութիւններ ունէինք: Ժողովրդից երկաթէ լարերով բաժանւած պօստի պաշտօնեայի խուցն էինք ազատ մտնում: Մուտքը այստեղ արգելւած էր: Բացառութիւնը մենք էինք, մէկ էլ արքունի գանձարանի ու բանկի պաշտօնեաները: Մեր տետրակն էլ ընդհանուր մատեաններից ջուկ էր: Մեզ շուտ էին ճանապարհ գցում, ուրիշների նման երկար չէին պահում:

Ուրեմն տեսնում էք որ վայել չէ ինձ, խմբագրութեան ցրւիչիս պատուած կրկնակօշիկներով, բարակ պայտօ ու գլխարկով մարդամէջ դուրս գալ:

Խմբագիրը պատւիրել էր ինձ այսօր երեք անգամ պօստ գնալ: Ստանում էի բաժանորդներից յայտագրերը, բերում խմբագրին, որ վաւերացնում էր, ինձ տալիս, գնում էի պօստից դրամական ծրարներն ստանում և նոր յայտագրերի հետ բերում, որ էլի վաւերացնում էր, ես պօստն էի գնում, իսկ խմբագրատանը մատեան էին մուծում, նոր հասցէները ուղարկում տպարան որ շարեն, տպագրեն, որպէսզի Նոր-Տարւայ N-ը բոլորին էլ ուղարկւի:

Ստորագրւողներն էլ սկի չեն երեւակայում, թէ որքան դժւար է, երբ սպասում են ու վերջի օրերը վերանորոգում իրանց բաժանորդագրութիւնը:

Առաւօտեան պօստը բերել էի խմբագրատուն և երկրորդ անգամ գնացել, որ ստանամ դրամական ծրարները: Սպասում էի «НОВ. 06.» լրագրի սպասաւորին, որ ինձանից առաջ էր եկել, վերջացնի, որպէսզի ես սկսեմ մատեանում գրելը:

Պօստի նեղ դահլիճը արդէն լցւել էր ժողովրդով: Խեղճ Պաւլ էֆիմիչը, այսպէս էր մեր ծրարները տուող

պաշտօնեայի անունը, գլուխը կորցրել էր: Նա լաւ գիտէր, որ այսօր հազիւ ժամը հնգին իր խցից դուրս կը գայ: Բայց երեխաներին էլ խոստացել էր տօնածառ սարքել: Եթէ այսօր էլ չառնի, էլ երբ: Սրանց Ծննդեան նաւակատիկը այս երեկոյ է, իսկ վաղը դուքան, բազար ամեն տեղ փակ:

Ջընայած նրա շատ արագաշարժ լինելուն, այնուամենայնիւ յայտագրերը փոխանակ պակասելու, աւելի ու աւելի էին կուտակւում:

— Նինա Պետրովա, կանչեց Պաւլ էֆիմիչը:

Ամբոխը ճղելով առաջ եկաւ բարձրահասակ, դուռնա, նիհար, ոսկրները միացած երիտասարդ մի կին:

— Ինձ մօտ չէ, շարտեց յայտագիրը նրան և նոյն մոնոտոն ձայնով կարգաց հետեւալ յայտագիրը:

Խեղճ Նինա Պետրովան մի րոպէ կարծէք փէտացած լինէր: Յետոյ թէ՛ ինչպէս ինձ մօտ չէ, անդգայաբար հարցրեց կողքի կանգնած մի չաղ կնոջ, որ փաթաթւած էր մուշտակի մէջ:

— Դուք չէք Նինա Ալէքսանդրովնա Պետրովան:

— Այո, ես եմ, վախ՛խելով պատասխանեց նա:

— Էլ ինչ դալաթ է անում, որ ասում է իմ մօտ չէ, բա հւմ մօտն է:

Ու հրելով կողքի մարդկանց, համարձակ առաջ գնաց, խրոխտ ձայնով սպառնալով՝

— Պարոն, դուք հերթը չէք պահում, ինչո՞ւ չէք այս խեղճ կնոջ ծրարը տալիս:

— Ասացի, որ ինձ մօտ չէ, զայրացած պատասխանեց Պաւլ էֆիմիչը, շարունակելով իր գործը:

Չաղ կինը կոտրւեց և շարած մնաց: Իսկ Նինա Պետրովնայի առանց այն էլ մարած աչքերը, կարծէք բոլորովին խաւարեցին. նա սփրթնել էր, երեսի երակները խփում էին շատ ուժգին:

— Տիկին, այստեղ վերադիր վճարները, արքունի և խմբագրութեան ծրարներն են տալիս, ահա անցէք ձա

կողմը, այնտեղ կըստանաք, հասկացրի նրան ու սկսեցի գրել մատենանում:

Վերջացրի գործս, անցայ Նիկողայ Դաւիթիչի մօտ, ստացայ կէսօրեայ պօստը և եկայ խմբագրատուն:

Խմբագիրը վաւերացրեց նոր յայտագրերը, ես երրորդ անգամ վերադարձայ պօստ: Այսօր բաւական բաժանորդներ էին եկել: Ստացայ Պաւլ Էֆրիմիչից նոր ծրարները, իսկ մէկը պ. Աղայեանինը լինելով, մոռնաւ էր ընդհանուր մատենանում, պէտք է ստանայի Սօսեանից:

Սկի չեմ սիրում սրանից ծրար ստանալը, ժամերով պէտք է սպասեմ հերթիս: Վերին աստիճանի ճշտապահ չինովնիկ է. վայ է եթէ մէկը մատենանում մի տառ պակաս գրեց, կամ թանաք կաթացրեց: Մի խօսքով՝ հայ չինովնիկ: Ասենք մեղադրելի էլ չէ, ծառայութիւնը դաժան և պատասխանատու է, իսկ ռոճիկը քիչ:

— Նինա Պետրովա, շարտելով յայտագիրը նրան ինչպէս Պաւլ Էֆրիմիչն էր արել, — պէտք է վաւերացնել:

— Խնդրեմ, մեծ գումար չէ, անվստահ առարկեց յուսահատ կիւն:

Բայց Սօսեան չըլսելը դնելով, կանչեց հետեւեալին:

— Այստեղ ինձ ոչոք չէ ճանաչում, մեծ գումար չէ: Խնդրում եմ:

— Ձեզ մի անգամ ասացին, որ պէտք է վաւերացնել, տարէք պօլիցիային, նօտարիուսին:

— Բայց արդէն ուշ է:

— Ինձ ի՞նչ, չինովնիկին յատուկ պաղարիւն տոնով պատասխանեց վերջին անգամ Սօսեանը:

— Տարէք ձեր ցրէիչին, նա կը վաւերացնի, լաւ հաշուած մի պարոն, կարեկցաբար խորհուրդ տաւ Նինա Պետրովային:

— Այդ անկարելի է, սաստիկ արգելւած է, մէջ ընկաւ կիսամաշ տալման զցած մի կարճահասակ կին: Առաջ այդ կարելի էր, բայց այժմ սաստիկ արգելւած է: Դեռ

ժամանակ կայ, կը հասնէք, տարէք նօտարիուս Տուրկովսկու մօտ, տասը կողէկ պիտի տաք, կը վաւերացնեն: Այստեղից շատ մօտ է, Երևանեան հրապարակի վրայ, բանկի տակին:

Յուսահատ կիւնը պատասխանի փոխարէն մի խոր հոգոց հանեց: Երեւի նա տաս կողէկ էլ չունէր, որ տանէր յայտագիրը վաւերացնէր:

Ո՛րքան կարեկցութիւն շրջապատողներէց. բայց այդ բոլորից միասին տաս կողէկ էլ չէր գոյանում, որ նօտարին տար:

— Տէք ինձ յայտագիրը վաւերացնեմ, և առանց ներա համաձայնութիւնը առնելու, ձեռից առայ, գրեցի թէ հաւաստիացնում եմ իմ ստորագրութեամբ, որ սա ինքն է Նինա Պետրովան, որին անձամբ ճանաչում եմ: Պօստում էլ գրչի սով է, այդ պատճառով Գենիի ինձ ընծայած «Աշտուկան գրիչը» ինձանից այս օրերն անբաժան է:

— Միթէ այդ կարելի է, շնորհակալութեան փոխարէն, կասկածով հարցրեց Նինա Պետրովան, առնելով յայտագիրը ինձանից:

— Ինչո՞ւ չէ. սրտեղից էք սպասում այդ ծրարը:

— Խանքենդուց, եղբայրս Պլաստունների բատալիօնումն է ծառայում: Պարտք շատ ունի, ընտանիքը մեծ է, պորուշիկ է, թէ չէ մենք այսքան թշուառ չէինք լինիլ:

Ընդամենը տասն և հինգ մանէթ էր ստանում խեղճ կիւնը և քանի մարդու առաջ պիտի կարմրէր, խոնարհէր՝ եղբօրը, պօստի ցրէիչին, ծրարներ տուողին, շրջապատող կարեկցներին: Առաւօտից այստեղ է և՛ ով գիտէ, կարող էր այնպէս պատահել, որ դատարկ ձեռքով տուն վերադարձար: Լաւ նաւակատիկ կը լինէր, չէ՞:

Յայտագրից իմացայ, որ Նինա Պետրովան ապրում է Ալեքսանդրեան փողոցում, Դիդուբէի մօտերքը, № 18* տանը: Եւ մինչդեռ նա պիտի ստանար իր ծրարը, տալ-

ման գցած կարճահասակ կինն էլի մէջ ընկաւ:

— Երեւի այսօր ձեզ շատ է պէտք փողը: Ասենք թէ սկի մարդ կըլինի որ փողի պէտք չունենայ:

— Ո՛հ, անասելի շատ: Երեք ամիս է տան քրէհը չեմ տւել, չորս ամիս է կարիս մեքենան Րաբինովիչի կասում գրաւ է: Գիտէք ի՞նչ ասել է կարի մեքենան գրաւ դնելը: Երեխերքս այս ցրտերին մերկ, փայտ չունենք, է՛հ, որ մէկն ասեմ: Եթէ այսօր մեքենաս չազատեմ, կըծախեն, վերցրած գործիցս էլ կըզրկւեմ:

— Քանի երեխայ ունիք, տիկին, հարցրի ես:

— Մի աղջիկ և մի տղայ, Անէտաս Եօթ տարեկան է, իսկ Պաւուշը հինգ. հօր քառասունքից յետոյ է ծնւել: Ամուսինս Զազամ ուսուցիչ էր, խօլերից մեռաւ: Մենք էլ ենք եղել բախտաւոր... Լացակումեց խեղճ կինը և մինչև խօսքը կըվերջացնէր, Սօսեանը նրան կանչեց:

— Նինա Պետրովա, գրեցէք, ահա այստեղ — Пакет на пятнадцать рублей, пятнадцать пишите прописью, буквами, получила: Նինա Պետրովան Սօսեանի թելագրածը բառ առ բառ մուծել էր մատենում, առանց հասկանալու թէ ինչ պիտի գրէր և բացի այդ չէր գրել իր Ա՞նու, այլ նրանից բարձր:

Սօսեանը յանկարծ նկատեց և բղաւեց՝ ի՞նչ արիք, վայր դէք գրիչը:

Նինա Պետրովան իրան բոլորովին կորցրեց, գիտէի, որ կուժն ու կուլան իմ գլխիս էլ է կոտրւելու, թողեցի Աղայեանցի յայտագիրն այնտեղ և դուրս եկայ պօստից:

Քամին հանդարտել էր, օրը զլարթացել: Աւելի լաւ չի՞ լինիլ տուն ուղարկելիք ընծաների փոխարէն գնամ Րաբինովիչից ազատեմ այդ կնկայ կարի մեքենան և տամ իրան, մտածեցի ես ու քայլերս ուղղեցի դէպի Երևանեան հրապարակը: Ճանապարհին բաց արի խմբագրութեան ծրարներից մէկը, որի մէջ քսան ըուբլի կար և մի ակնթարթում Րաբինովիչի կասումն էի: Այստեղը ինձ էլ



անծանօթ չէ: Ամսական մանէթին երեք կողէկ շահ ենք տալիս, բացի այդ գրաւը պահելու, մարկի և այլն առանձին:

Բարի հրէայի սենեակը լիքն էին Նինա Պետրովայի նման կմախք դարձած, աչքները փոս ընկած կնիկներով: Երկի սրանք էլ էին եկել իրանց կարի մեքենաները ազատելու, որ տանեն դիշեր-ցերեկ աշխատեն, Նոր-Տարուն առանց արտասուքի դիմաւորեն: Բաբինովիչին կանչեցի միւս սենեակը, բացատրեցի կամքս: Լաւ հասկացաւ ինձ, բայց չըհամաձայնեց մեքենան առանց կասի ընկալագրի ինձ տալու: Վերջը մի կերպ աղաչանք-պաղատանքով համոզեցի, վճարեցի պարտքն էլ, տոկոսն էլ, մարկի փողն ու սահմանեալ տուգանքն էլ, ընդամենը 7 ռուբլի 64 կոպէկ: Ստորագրութիւն տւի, եթէ Նինա Պետրովան, երբ գնայ տեանի մեքենան իր սենեակում, և չըբերի վերադարձնի ընկալագիրը, ես պարտաւոր եմ յիսուն ռուբլի տուգանք տալ: Մի խօսքով, թէկուզ հազար ստորագրութիւն ուզէր բարի հրէան, պատրաստ էի տալու, միայն թէ մեքենան այնտեղից ազատէի: Բաբինովիչը ի հարկէ լաւ վաճառականին վայել ագնիւ խօսք տւաւ ինձ՝ Նինա Պետրովային չըյայտնել իմ անունը, այլ ասել, որ մեքենան պահեստումն է, մինչև երեկոյ իրանց մարդը կըտանի նրա բնակարանը և փողն էլ այնտեղ կըստանայ: Խոստացաւ նոյնպէս նրան մի փոքր պահել իր կասում, մինչև ես մեքենան հասցնեմ նրա բնակարանը:

Բաբինովիչի մօտից, աշխարհն իմս դարձած, դուրս եկայ, մեքենան դրի մի կառքի մէջ, բայց մէկ էլ ասացի՝ մի քիչ մըգեղէն էլ առնեմ այն որք երեխաների համար: Թամամշէի քարւանսարայի ետև սեղաններ էին բացել և ինչ տեսակ-տեսակ միրգ ասես, որ չըլինէր այնտեղ: Ձեռիս 10 մանէթից, հրէայի տւած 2 ռ. — 36 կոպէկին չամիչ, նուշ, շագանակ, խնձոր, նարինջ, փշատ առայ ու կառքի ետև դարսելով, պատուիրեցի կառավարին սլանալ Ալէքսանդրեան փողոցը:

Յանկարծ խելքիս փչեց՝ մի քիչ չայ, շաքար էլ առնեմ: Կառքը կանգնեցրի Գիշմիշեանի մագաղինի առաջ. երեք մանէթ տւի նրան, որ այդ փողին ինձ չայ, շաքար, դափա, դալէտ ու մոմ տայ: Փողից աւելացաւ, դեռ կէս գրւանքայ մօնպասէ ու լանդրին էլ տւաւ: Այստեղից մտայ թիւրքի խանութը երկու ռուբլու մեղրը ու բրինձ առայ, իսկ այնտեղից էլ Թամամշէի քարւանսարան Բադինովի կօշիկների խանութը:

— Սոլոմոն Եակովիչ, ինչ կուզես արա, ահա երեք մանէթ, երկու շուխտ շատ գեղեցիկ և շատ պինդ, նոր ձևի կօշիկ տուր, մէկը եօթ տարեկան աղջկայ, միւսը հինգ տարեկան աղի համար:

— Հէր-օխնած, համ նոր մօգնի, համ գեղեցիկ, համ պինդ, երկու շուխտն էլ երեք մանէթ, էդ ինչպէս կուլի:

— Կըլինի, թէ չի լինի, չըգիտեմ, միայն Աստուծու սէրին՝ շուտ արա:

— Խէր ըլի. ում համար:

— Աստուած սիրես՝ շուտ արա:

— Պաժար խօմ չի:

— Ի՞նչ պաժար, եօլկա է, եօլկա:


Մինչդեռ մենք այսպէս սակարկում էինք, Գէորգին սեղանի վրայ թափեց մի կոյտ կօշիկներ: Աչքս բռնածից երկու շուխտ վեր առայ ու դուրս եկայ:

— Էտէնց չի լինի, խաչ, առքն իլ չիս տալի, ետևիցըս խօսում էր Սոլոմոն Եակովիչը, բայց ով էր լսողը:

Ձեռիս քսան ռուբլուց դեռ երկուսն էլ էր մնում: Առանց երկար մտածելու մտայ Կաֆեանի վաճառանոցը:

— Սերգէյ Գերասիմիչ, ահա երկու մանէթ. բամբազէ, լանկորթ, չիթ, կտոր, ինչ կուզեք տւէք, մի մայր և երկու երեխայ են: Միայն շուտով, ինչդեմ:

Առանց ուշանալու, բաւական հաստ կապոցով դուրս եկայ այստեղից:



խմբագրատունն էլ էի մոռացել, Աղայեանցի ծրարն էլ, պայլտօն ու հարբուխս էլ:

Գորովինսկու վրայ բացարի երկրորդ ծրարը և 10 ր. հանեցի: Երկու ամսւայ ոտճիկս էր: Ինչ կրլինի, կրլինի, մտայ Հէյնէի թխւածքի խանութը: Ինչեր ասես, որ չըլինէին այստեղ. տօնածառի զարդեր, թխւածք, կանֆէտ: Երկու խօսքով հասկացրի Հէյնէին կամքս ու երկու ըուբլով տօնածառի համար տասներկու, գուցէ էլ աւելի ըուբլու քաղցրեղէնով, թխւածքով, խաղալիքներով դուրս եկայ, կառքս լցրի ու Վէրի կամուրջով իջնելիս, կանգ առայ: Այստեղ մի տօնածառ, մի սալ փայտ և մի տոպրակ ածուխ առայ 5 ր.-50 կոպէկի, հասցէն տւի սալապանին և ես շարունակեցի ճանապարհս:

Ժամը չորսից անց էր, որ կանգ առայ № 18* խարխուլ տան առջ:

—Պաւլուշա, Անետա, առանց իջնելու կառքից բըղաւեցի:


—Ո՛ւմն էք կամենում, մի զառամեալ կին բակից պատասխանեց ինձ:

—Տա՛նն է նինա Ալէքսանդրովնա Պետրովան, հարցրի ես:

—Տանը չէ, պօստն է գնացել, դեռ չի եկել, երևի շատ մարդ կայ այնտեղ: Ես էլ եմ սպասում, դեռ ոչինչ չեմ առել, ազիզ օր է: Երեք ամսւայ սենեակի վարձը մնում է: Է՛հ, ինչ արած. չքաւորութիւնն էլ մի բան չէ: Մէկին Աստուած այնքան տալիս է, որ չըգիտէ, թէ ինչ անի, մէկին ցամաք հաց էլ չի հասցնում:

—Իսկոյն, տիկին, կըստանաք, սենեակի վարձը: Կրկին ձայն տւի՝ Պաւլուշա, Անետա:

Ցնցոտիների մէջ մի կայտառ տղայ եկաւ, ետեիցն էլ քոյրը: Կառապանը դուրս էր տալիս կապոցները, իսկ երեխաների հետ ես տանում էի նրանց սենեակը:



— Ո՞վ է ուղարկել, մի կապոց էլ ձեռին ներս մտնելով,
հարցրեց ինձ պառաւը:

— Ուղարկողը: Իսկ ձեզ ճրքան է պարտ:

— Եօթը ըսէր ի ու կէս:

Առանց երկար մտածելու, բացի և երրորդ ծրարը,
հանեցի 10 ռ. տւի պառաւին, խնդրելով, որ աւելորդն
էլ հաշւի առաջիկայ ամուսնայ համար: Իսկ Նինա Ալեք-
սանդրովնան էլ երբ դայ, ասացեք նրան, որ Բաբինովիչին
վերադարձնի մեքենայի ընկալագիրը, առանց մի կոպէկ
նրան տալու:

Կառապանն արդէն դատարկել էր իրեղէնները: Ես
դուրս եկայ փողոց, նստեցի կառք: Պառաւը ինչոր մի
բան էլ ասաց, բայց նրան էլ ականջ չըդրի, շտապում էի
խմբադրատուն: Արդէն մուտն ընկել էր, երբ խմբադրա-
տուն վերադարձայ: Երեք ու կէս ժամ պահել էի կառքը,
հանեցի երկու ըսէր ի տւի կառապանին, չըվերցրեց:

— Հը՛, քիչ է՛, ահա և երեսուն կոպէկ էլ:

— Ոչ թէ քիչ, այլ շատ-շատ է, բայց պէտք չէ:

— Ի՞նչպէս թէ պէտք չէ, ինչո՞ւ:

— Մի՞թէ մենք մարդ չենք, չէ, չեմ վերցնիլ, բարի
գիշեր: Եւ մի ակնթարթում անհետացաւ կառապանը աչ-
քիս առաջից:

Քառորդ ժամ մնացի տեղս անշարժ կանգնած: Կար-
ծէք գլխիս սառ ջուր մաղեցին: Անսահման ուրախութիւ-
նըս չքացաւ, մի ժամ առաջ աշխարհը, որ ասես իմը լի-
նէր, ձեռիցս առածի նման էի:

Խմբագիրը բարեբախտաբար տանը չէր, ծրարները
դրի սեղանի վրայ և հետն էլ մի տոմսակ, որ քառասուն
մանէթ վերցրել եմ, երեսուն և հինգը ինձ հասանելի
ոռճիկս, իսկ հինգ մանէթ էլ դալ ամուսնայ հաշւից և ա-
ռանց ճաշելու գնացի սենեակս, պառկեցի, ուքնով անցայ:

Յրագումս տօնածառ էր: Հայունեաց Բարեգործական
Ընկերութիւնն էր սարքել: Պաւլուշի, Անետի նման
հարիւրաւոր մանուկներ թռչկոտում էին ոսկեզօծ ծառի
շուրջը, իսկ ընկերութեան չքնաղ անդամուհիները Նինա
Պետրովային և նրա նման շատ նիհար գունատ կանանց,
որ տեսել էի Րաբինովիչի կատում, մի-մի կարի մեքենա-
ներ էին բաժանում:



Հետեւեալ առաւօտ երբ վեր կացայ, հարբուխաբոյ-
րովին անհետացել էր: Եւ չընայած նրան, որ մինչև օրս
էլ բարակ գլխարկս եմ ծածկում ու նոյն կիսամաշ կրկնա-
կօշիկներս մնալով, չեմ հագնում, այնուամենայնիւ էլ
հարբուխ չեմ ընկնում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0403108



გზის 30 ყოყმან

გზის ტიფლის, Редакция Тараз.